

ՏԱՐԵԼԻՑ

ՉՍՊԻԱՅՈՂ ՎԵՐՔ. ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԴԱՏԵՐԱԶՄԻՑ 14 ՏԱՐԻ ԱՆՅ

Տասնչորս տարի է անցել ռուս-վրացական պատերազմից: 2008 թվականի օգոստոսի 8-ին, առաջին անգամ սառը պատերազմից հետո, Ռուսաստանի Դաշնությունը այլ, անկախ պետության դեմ բացահայտ ռազմական ագրեսիա իրականացրեց, որի արդյունքում իր կողմից բռնազավթված Աբխազիան եւ Յխինվալիի տարածաշրջանը ճանաչեց որպես այսպես կոչված անկախ պետություններ:

Հիշեցնենք, որ Յխինվալիի տարածաշրջանի հակամարտության զոտում կրակի դադարեցման ռեժիմի խախտումները սկսվեցին դեռևս 2008 թվականի հուլիսի վերջերից, իսկ օգոստոսի առաջին օրերից, Ռուսիի թունելի մոտակայքում, մոբիլիզացվեցին ռուսական 58-րդ բանակի ուժերը: Օգոստոսի 8-ից ինտենսիվ մարտեր սկսվեցին Վրաստանի գիմված ուժերի եւ ռուսական կանոնավոր բանակի ստորաբաժանումների միջև:

Հաջորդ օրերին ռուսական ավիացիան ռմբակոծեց Վազիսի եւ Սենակիի ռազմաբազաները, Մառնեուլիի ռազմական օդանավակայանը, Գորի քաղաքը, Փոթիի նավահանգիստը եւ Կոդորիի կիրճը:



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԸՆՏՐԵԼ ԵՆՔ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳԵՄԱՆ ԽԵՆՄԱՏԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Օգոստոսի 8-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, երկրի կառավարության, խորհրդարանի անդամների, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների ուղեկցությամբ, այցելեց Թբիլիսիի Մուխաթավերդիի եղբայրական գերեզմանատուն, որտեղ հարգանքի տուրք մատուցեց 2008 թվականի վրաց-ռուսական օգոստոսյան պատերազմի զոհերի հիշատակին:

Իմ եւ կառավարության անունից ցանկանում եմ վշտակցություն հայտնել մեր զոհված հերոսների ընտանիքներին, մեր զին-



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ԴԻԴՈՐԻԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՈՒՂԵՅՈՒՅՑ Ե ԲՈՒՈՐԻՍ ՀԱՄԱՐ»

Օգոստոսի 12-ին Վրաստանը նշեց Դիդորոբան: 1121 թվականի այդ օրը, Վրաստանի թագավոր Դավիթ 4-րդ Աղմաշենբեբլու գլխավորությամբ, վրացական զորքը պարտության մատնեց թուրք-սելջուկների եռապատիկ անգամ գերազանցող բանակին:

Այդ հաղթանակը բեկումնային դարձավ Վրաստանի պատմության մեջ, վերածվելով վրաց պատ-

մության ոսկե դարաշրջանի, որն առավել զարգացավ Գիորգի Երրորդի եւ Թամար թագուհու օրոք:

Այդ օրը, Թբիլիսիից 30 կիլոմետր հեռավորության վրա, Մանգլիսիի մոտակայքում, Դիդորիի դաշտում անցկացվեց միջոցառում՝ նվիրված պատմական իրադարձության տարելիցին: Միջոցառմանը ներկա էին Վրաստանի (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ԿՈՐԱԽԻՉԵ. «ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՅՄԱՆԱԾԱԿՈՒՄՆԵՐ ՄՏՅԵԼԸ, ԱՅԼԱՏՅԱՅՈՒԹՅՈՒՆ Ե՛»



«Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության նախագահ Իրակլի Կորայիժեն արձագանքեց «Լեյո» կուսակցության պահանջին:

- Ըստ «Լեյո»-ի պահանջի՝ վրացական իշխանությունները Ռուսաստանի քաղաքացիների համար պետք է սահմանեն նոր այցեգրային պայմանակարգ, - հայտարարեց Իրակլի Կորայիժեն եւ հավելեց, որ օգոստոսյան պատերազմից հետո նախորդ իշ-

խանությունն անայցեգրային պայմանակարգ էր սահմանել ՌԴ քաղաքացիների համար.

- Նույն մարդիկ մեզ կոչ են անում սահմանափակումներ մտցնել: Սա կանխամտածված, այլատյաց արշավ է, ինչը պարզապես (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼԵՎԱՆ ԴԱՎԻԹԱՇՎԻԼԻ. «ՄԻՆՉԵՎ ՏԱՐԵՎԵՐԶ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԳՆԵՐԸ ԿՆՎԱԶԵՆ»

Օգոստոսի 11-ին, Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման ու ֆինանսների նախարարներ Լեւան Դավիթաշվիլին եւ Լաշա Խուցիշվիլին հանդիպում ունեցան վառելիքի վաճառքով զբաղվող խոշոր ցանցերի ներկայացուցիչների հետ:



Հանդիպմանը քննարկվեցին նավթամթերքների սպառողական շուկայում տիրող իրավիճակը, մցակցության հարցերն ու վառելանյութի առքուվաճառ-

քի գների տարբերությունը նվազագույնի հասցնելու հնարավորությունները: Էկոնոմիկայի նախարարուհի (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԱՂԱՂՈՎՎԵԼ Ե 12 ՀԱՅԱՐ ՍՈՑԻԱԼԱԳԵՍ ԱՆԱՂԱՂՎ ԱՆՉ

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախաձեռնությամբ մեկնարկված՝ Վրաստանում սոցիալապես անապահով անձանց զբաղվածության ծրագրի շրջանակում, աշխատանք է ստացել մոտ 12,6 հազար մարդ. ասվում է 2022 թվականի պետական բյուջեի վեց ամսվա կատարման հաշվետվության մեջ:

Սոցիալապես անապաշտպան անձի կարգավիճակ ունեցող քաղաքացիների զբաղվածության պետական ծրագիրը մեկնարկել է մարտի 1-ից: Պետական ծրագրին կարող են մասնակցել 18 տարեկանը լրացած աշխատունակ անձինք, որոնց ընտանիքի վարկանիշային միավորները չեն գերազանցում 120 000-ը, եւ որոնք ստանում են սոցիալական աջակցություն:

Ֆինանսների նախարարության տվյալներով՝ մարտի 1-ից հունիսի 30-ը սոցիալապես ան-

ապաշտպան քաղաքացիների զբաղվածության թիվը հասել է 12,6 հազարի:

Ընդհանուր առմամբ, համակարգում գրանցվել է աշխատանք փնտրող 42,9 հազար մարդ: Մինչեւ հունիսի 30-ը՝ պետությունն առաջարկել է 23,7 հազար քափուր աշխատատեղ:

Զբաղված 12,6 հազար մարդկանցից 992-ն աշխատանքի է տեղավորվել գյուղատնտեսության նախարարության, իսկ մնացածը՝ մուլտիցիպալիտետների (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՐԱՅԱՍՏԱՆ

STARMUS ՄԻՋԱԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՓԱՌՏՈՏՈՒԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Օգոստոսի 11-ին, Վրաստանի կրթության եւ գիտության փոխնախարար Նուրու Միցկելիչը հյուրընկալեց STARMUS միջազգային գիտական փառատոնի կազմակերպչական խմբին, որը գլխավորում էր Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Արթուր Մարտիրոսյանը:



Հանդիպմանը ներկա էին նաեւ կազմակերպչական խմբի անդամներ, աստղաֆիզիկոս, STARMUS փառատոնի համահիմնադիր Գարիկ Իսրայելյանը եւ փառատո-

նի ղեկավար Կատերինա Դանեկինան:

Հանդիպմանը կողմերը խոսեցին STARMUS միջազգային գիտական փառատոնի կառուցման մասին:

ՏԱՐԵԼԻՑ

ՉՄՊԻԱՅՈՂ ՎԵՐՔ. ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ 14 ՏԱՐԻ ԱՆՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Օգոստոսի 11-12-ին, Ֆրանսիայի այն ժամանակվա նախագահ Նիկոլյա Սարկոզիի միջնորդությամբ, ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևին ու Վրաստանի նախագահ Միխեիլ Սակաշվիլին՝ Վրաստանում մարտական գործողությունների դադարեցման մասին 6 կետից բաղկացած համաձայնագիր ստորագրեցին:

Ըստ պաշտոնական տվյալների՝ այդ հինգ օրերին օսական կողմն ունեցել է 365 կորուստ, վրացական կողմը՝ 412: Պատերազմի պատճառով վիրավորվել են տուժել է 2232 անձ, որոնցից 1045-ը՝ զինվորական: Ձուկվել են նաև 67 ռուս խաղաղապահներ: Ֆարավային Օսեթիայի տարածքում գտնվող վրացական գյուղերի մոտ 80 հազար բնակիչներ լքել են բնակավայրերը եւ համարել փախստականների ու բռնի տեղահանվածների շարքերը:

ՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՇՆԵՐԻ ԽՈՆԱՐՅՈՒՄ Ի ՊԱՏԻՎ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՈՂԵՐԻ

Օգոստոսի 8-ին, ի պատիվ 2008 թվականի օգոստոսյան պատերազմի զոհերի հիշատակի, Վրաստանի կառավարության գրասենյակի, նախագահի նստավայրի, երկրի խորհրդարանի, ողջ երկրի վարչական շենքերի եւ արտերկրում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչություններում ծածանվող պետական դրոշմերը իջեցվեցին:

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՇԻՆԴԻՍԻ ԶԵՐՈՍԵՐԻՆ

Օգոստոսի 8-ին, 2008 թվականի օգոստոսյան պատերազմի 14-րդ տարելիցի կապակցությամբ, Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին ծաղկեպսակ դրեց Շիդա Քարթլիի տարածաշրջանի Շինդիսի գյուղում օգոստոսյան պատերազմում զոհված շինդիսցիների հերոսների հուշակոթողին եւ հարգանքի տուրք մատուցեց նրանց հիշատակին:

Նախագահը Նիկոսի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցում մաս-



նակցեց պատերազմում զոհվածների հոգիների հոգեհանգստի արարողությանը, որը վարեց Նիկոսի եւ Յիսիմվալիի միտրոպոլիտ Եսաիան:

Նախագահի հետ ներկա էին տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

ՄԱՅՐՎՔԱՂԱՔԻ ՄԻ ՇԱՐՔ ՓՈՂՈՑՆԵՐ ԿԿՈՉՎԵՆ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶԵՐՈՍԵՐԻ ԱՆՈՒՆԵՐՈՎ

Թբիլիսիի քաղաքային սակրեբուլոյի Անվանումների եւ խորհրդանիշների հանձնաժողովի նիստում որոշում է կայացվել՝ Թբիլիսիի 15 փողոց անվանակոչել 2008 թվականի ռուս-վրացական պատերազմում զոհված Վրաստանի ազգային հերոսների եւ մարտիկների անուններով:

- Սա մեր ոչ վաղ անցյալի շատ ողբերգական օր է, բայց, մյուս կողմից, մեր հերոսների սխրանքներով բոլորս կարող ենք հպարտանալ: Ուստի, յուրաքանչյուր վրացու պարտքն է՝ նրանց անունները հավերժացնելու համար, անել ամեն ինչ: Այս գործընթացը կլինի շարունակական,- ասաց Թբիլիսիի սակրեբուլոյի նախագահ Գիորգի Տղեմալաձեն:

ԻՐԱՎԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԸՆՏՐԵԼ ԵՆՔ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆՁՆԱՆ ԽԵԼԱՄԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վորականներին եւ ոչ միայն զինվորականներին, մեր քաղաքացիներին, մեր հերոսների վառ հիշատակին:

14 տարի է անցել 2008 թվականի օգոստոսյան պատերազմից, որը իսկեց մեր բազմաթիվ համաքաղաքացիների կյանքը: 14 տարի շարունակ մեր երկրի սիրտը՝ Սամաչաբլուն, Ցխինվալիի շրջանը եւ Աբխազիան օկուպացված են Ռուսաստանի կողմից: Խոնարհվում են օգոստոսյան պատերազմում զոհված մեր հերոս զինվորների եւ խաղաղ բնակիչների

հիշատակի առջեւ: Մենք, որպես տարածքային ամբողջականությունը վերականգնելու եւ երկիրը միավորելու միջոց, ընտրում ենք խաղաղ, խելամիտ քաղաքականություն եւ հավատում ենք, որ անպայման կհասնենք մեր նպատակին, Վրաստանը կլինի միասնական:

Ես ուզում եմ մեր երկրին մաղթել խաղաղություն եւ միավորում: Շատ ցավալի է, երբ շահարկում ենք ամսաթվերը: Օգոստոսի 8 ամսաթիվը ընդհանրապես քննարկման առարկա չի կարող լինել, քանի որ հենց նախկին իշխանության ներկայացուցիչները միշտ օգոստոսի 8-ին

են եկել այստեղ: Եվ մանավանդ, ամոթ է, որ այս քննարկում է մեր հերոս զինվորների ընտանիքի անդամների կողքին, հարգանքի տուրքը մատուցելու պահին: Մինչդեռ, էականն այն է, որ հենց նախկին նախագահ Սակաշվիլու անխոհեմ քաղաքականությունը, նրա չհաշվարկված սադրիչ քայլերը բերեցին նրան, որ չկարողացան կանխել այս ողբերգական պատերազմը, դա Սակաշվիլու եւ նրա թիմի դավաճանությունն էր, նրանք մատնեցին մեր երկիրը եւ նվաստացրին մեր ժողովրդին, սպանեցին մեր զինվորականներին,- նշեց Իրակլի Դարիբաշվիլին:

«ԴԻՊԳՈՐԻԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՈՒՂԵՑՈՒՅՑ Ե ԲՈԼՈՐԻՍ ՀԱՄԱՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին, երկրի կառավարության եւ խորհրդարանի անդամներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ:

Իր խոսքում, Իրակլի Դարիբաշվիլին երկրի բնակչությանը շնորհավորեց Դիպոլորիի հաղթանակի տարելիցի առիթով: - Դիպոլորիի ճակատամար-

տում տարած հաղթանակը հնարավորություն տվեց ազատագրել մեր երկիրը եւ ծնեց վրացական պատմության ոսկե դարը՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական, կրթական վերածնունդը: Իսկապես, Դիպոլորիի ճակատամարտը եւ Դիպոլորիի հաղթանակը ուղեցույց են մեր յուրաքանչյուր քաղաքացու համար, մենք պետք է հիշենք, հաջորդ սերունդը պետք է հիշի, որ մեր երկրի ու ժողովրդի միասնությանը, հայրենիքի համար ամեն-



նօրյա աշխատանքով, մենք կկարողանանք հաղթահարել ամենամեծ մարտահրավերները, միավորել մեր ազգը եւ միակարողանալ մեր հաղթանակը: Վրաստանի վարչապետը:



ԱՄՆ

ԽՈՒՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՐԻ ԿԱԿԱԾՔՈՒՄ

NewsNation հեռուստաալիքի տվյալներով, օգոստոսի 8-ին, Ֆլորիդայում, Դոնալդ Թրամփի կալվածքում, խուզարկությունը շարունակվել է մոտավորապես 9:00-ից մինչև 18:30-ը:

Հեռուստաալիքը հայտնում է նաև, որ խուզարկությունների անցկացմանը ներկա են եղել Թրամփի երեք փաստաբանները: Հեռուստաալիքի տեղեկություններով՝ Հեռուստաալիքների դաշնային բյուրոյի աշխատակիցները փնտրել են կոնկրետ փաստաթղթեր, որոնք էլ առգրավվել են նախկին նախագահի սեյֆից:

ՖՐԱՆՍԻԱ

ԱՆՆԱԽԴԵՊ ԵՐԱՇՏ. ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Ե «ԿԱՐՄԻՐ» ՄԱԿԱՐԴԱԿ

Ֆրանսիայի կառավարությունը հակաճգնաժամային շտաբ է ձևավորում երաշտի հետեւանքների դեմ պայքարելու համար: Հուլիսը դարձավ ամենաչոր ամիսը վերջին վեց տասնամյակների ընթացքում՝ 7 անգամ ավելի քիչ տեղումներ են եղել, քան անհրաժեշտ է: Հարյուրից ավելի վարչական շրջաններ խմելու ջրի լուրջ խնդիրներ ունեն, բերքը վտանգի տակ է:

Ֆրանսիայի բոլոր դեպարտամենտները, երաշտի պատճառով, գտնվում են հատուկ հսկողության տակ, դրանցից 46-ը գտնվում են վտանգի ամենաբարձր մակարդակի վրա, ինչը ենթադրում է ջրի օգտագործման լուրջ սահմանափակումներ:

ԼԱՏՎԻԱ

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ՝ ԱՐԱԲԵԿՉՈՒԹՅԱՆԸ ԱՋԱԿՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Լատվիայի Սեյմը Ռուսաստանը ճանաչել է որպես ահաբեկչությանն աջակցող պետություն՝ համապատասխան հայտարարությունն ընդունել է Լատվիայի օրենսդիր մարմինը:

Հայտարարության մեջ նշվում է, որ Ուկրաինայում Ռուսաստանի գործողությունները «ուկրաինացի ժողովրդի կանխամտածված ցեղասպանություն» են:

Լատվիայի Սեյմը կոչ է արել համախոհ երկրներին ճանաչել Ռուսաստանը՝ որպես ահաբեկչությանն աջակցող պետություն եւ դիմել է Եվրամիությանը՝ դադարեցնել տուրիստական եւ այլ տեսակի վիզաների տրամադրումը Ռուսաստանի եւ Բելառուսի քաղաքացիներին:

ՌՈՒՄ - ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ. 170-ՐԴ ՕՐ

ԱՄՆ-ԻՑ 4,5 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ

ԱՄՆ-ը Կիեւին կտրամադրի եւս 4,5 միլիարդ դոլարի բյուջետային օգնություն, այսպիսով՝ փետրվարից Վաշինգտոնի բյուջետային աջակցությունը կհասնի 8,5 միլիարդ դոլարի:

Նշվում է, որ, Համաշխարհային բանկի միջոցով, օգնությունը Կիեւին կտրամադրվի տրամշնորհի տեսքով, օգոստոսին Ուկրաինան կստանա 3 մլրդ դոլար:

ՈՒԿՐԱԻՆԱՅԻՑ 9 ՕՐՈՒՄ ԴՈՒՐՄ Ե ԲԵՐՎԵԼ 370 ՀԱԶԱՐ ՏՈՆՆԱ ԳՅՈՒՂՄԹԵՐՔ

Օգտվելով հացահատիկային միջանցքից՝ Ուկրաինան, ինն օրվա ընթացքում, 12 մավով 7 երկրներ է արտահանել 370 հազար տոննա գյուղմթերք:

10,5 ՄԻԼԻՈՆ ՄԱՐԴ ԼՔԵԼ Ե ՈՒԿՐԱԻՆԱՆ

ՄԱԿ-ի տվյալներով, փետրվարի 24-ից ուկրաինացիների թիվը, ովքեր գոնե մեկ անգամ հատել են երկրի սահմանը, կազմում է ավելի քան 10,5 միլիոն մարդ, ընդ որում, մոտ 4,4 մլն մարդ հատել է Ուկրաինայի սահմանը հակառակ ուղղությամբ, այսինքն՝ վերադարձել հայրենիք:

Ուկրաինացի փախստականների մեծ մասը՝ մոտ 1,2 միլիոն մարդ տեղափոխվել է Լեհաստան, որին հաջորդում են Գերմանիան՝ 900 հազար փախստականով, Չեխիան՝ 400 հազար փախստականով:

ՄԱԿ-ի տվյալներով՝ մոտ 1,9 մլն ուկրաինացի հատել է Ռուսաստանի սահմանը:

ՊԱՅՅՅՈՒՆ՝ ԴՐԻՄԻ ՕԴԱՆԱԿԱԿԱՅԱՆՈՒՄ

Օգոստոսի 9-ին, Դրիմի «Սակի» ռազմական օդանավակայանում, պայթել են ավիացիոն զինամթերքներ: ՌԴ պաշտպանության նախարարության տվյալներով, օբյեկտի վրա կրակային ազդեցություն չի գրանցվել եւ օդանավակայանում ավիացիոն տեխնիկան չի վնասվել: Պաշտպանության նախարարության աղբյուրը հրշեջ անվտանգության կանոնների խախտումն է համարել՝ զինամթերքների պայթյունի պատճառի հիմնական վարկածը: Դիտավորյալ ներգործության նշաններ՝ դրանք պայթեցման համար չկան: Տեղի իշխանությունների տվյալներով՝ սահմանվել է շրջափակման հիմնկիրմետրանոց գոտի: Մերձակա տներից տարհանվել է շուրջ 30 մարդ:

էջը պատրաստեց ՄԻՄՈՆ ԿԻԼԱՉԵՆ

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼԵՎԱՆ ԴՎՎԻԹԱՇՎԻԼԻ. «ՄԻՆՉԵՎ ՏԱՐԵՎԵՐԶ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԳՆԵՐԸ ԿՆՎԱԶԵՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թյունում կայացած հանդիպմանը, որին մասնակցել է նաև Ազգային մրցակցության գործակալության ղեկավար Իրակլի Լեքվինաձեն, նեկայացրեց վառելանյութի շուկայի մոնիտորինգի աղյուսները:

Ըստ Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Լեւան Դավիթաշվիլու՝ մասնավոր հատվածի հետ քննարկվել են

վառելանյութի շուկայում մրցակցության, վառելանյութի մատակարարման էժան աղբյուրների ձեռքբերման հարցերը, որոնք կնպաստեն ավտոլցման կայաններում վառելանյութի գների նվազեցմանը:

Խոսվել է նաև վառելիքի շուկայի կանխատեսումների եւ մրցակցային խնդիրների մասին: Հանդիպմանը մրցակցային գործակալության ղեկավար Իրակլի Լեքվինաձեն ներկայացրել է նավթամթերքների շուկայի մոնիտորինգի

արդյունքները:

Նշենք, որ վառելիքի գների վերաբերյալ Լեւան Դավիթաշվիլու եւ Լաշա Խուցիշվիլու հանդիպումները ցանցային ընկերությունների ներկայացուցիչների հետ տեղի են ունենում Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու հրահանգով:

Կառավարությունն ակտիվ աշխատում է մասնավոր հատվածի հետ եւ դիտարկում գների նվազեցման առավելագույն հնարավորությունները:



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ԴԱՑՎԵՑ 9 ՏՈՒԿՈՍԻ

Վրաստանի Ազգային բանկի նախագահ Կորա Գվենետաձեի հայտարարությամբ, Վրաստանի Ազգային բանկը բարձրացրեց տնտեսական աճի կանխատեսումը մինչև 9 տոկոս:

Ակնկալվում է, որ ԱՄՆ-ի Դաշնային պահուստային համակարգի եւ Եվրոպական կենտրոնական բանկի կողմից իրականացվող եւ հայտարարված տոկոսադրույքների բարձրացումը ազդեցություն կունենա Վրաստանում արտարժույթով վարկավորման դրամավարկային քաղաքականության խստացման վրա: Իրադարձությունների մասն զարգացման դեպքում Ազգային բանկը 2022 թվականին կանխատեսում է 9 տոկոս տնտեսական աճ, - ասել է Կորա Գվենետաձեն:

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԹՎՈՎ ԲԵՈՆԱՏԱՐՆԵՐ՝ ՎՐԱՍԱՆԻ ՏԱՐԱՆՑԻԿ ԾԱՆԱԴՈՐՆԵՐԻՆ

Վրաստանի ֆինանսների նախարարության տվյալներով՝ 2022թ. առաջին 6 ամսում Վրաստանի տարածքով անցել է 209 հազար բեռնատար, ինչը 51 հազարով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Սա նշանակում է, որ ամեն օր ավելի քան 1 150 բեռնատար անցել է երկրի տարածքով:

Ընդհանուր առմամբ, հունվար-հունիս ամիսներին տարանցիկ բեռներից բյուջե է փոխանցվել 41,9 մլն լարի եկամուտ: 2021 թվականի ընթացքում Վրաստանի միջանցքով, ընդհանուր առմամբ, օգտվել է 332 հազար բեռնատար, որից բյուջե է փոխանցվել 66,4 միլիոն լարի ճանապարհուղափոխման հարկ:

ԱՆԽԱՏԱՆՔՈՎ ԱՊԱՀՈՎՎԵԼ Է 12 ՀԱՉԱՐ ՍՈՑԻԱԼԱԳԵՄ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՆՉ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մարմիններում:


Հիշեցնենք, որ զբաղվածության ծրագիրը առաջարկում է սոցիալապես անապահով խավերին լրիվ դրույթով աշխատելիս ստանալ ամսական 300 լարի աշխատավարձ եւ խրա-

խուսվել պետության կողմից: Այս գումարը չի հարկվում:

Միաժամանակ, սոցիալապես անապահովները 4 տարի շարունակելու են օգնություն ստանալ պետությունից, նրանց կարգավիճակը չի ստուգվելու:

Ծրագրով սոցիալապես

անապահով խավերի հետ պայմանագիր է կնքվում մինչև 2022 թվականի վերջ: Զբաղվածության պետական ծրագրին կարող են մասնակցել նաև հաշմանդամություն ունեցող անձինք:



ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«ԳՅՈՒՂԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ»՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Ինչպես արդեն հաղորդել ենք, արդեն երրորդ տարին է, ինչ Վրաստանի տարածաշրջաններում արդյունավետորեն գործում է երկրի կառավարության նախաձեռնած «Գյուղի աջակցության ծրագիրը»:

միլիոն լարի՝ 7,6 միլիոն լարի համաֆինանսավորմամբ:

Օրենս, «Գյուղի աջակցության ծրագրի» շրջանակներում, «Էկո Վիլաջիո» ընկերությունը կազմակերպեց զբոսաշրջային տարածք Դեդոփլիսծղարոյի մունիցիպալիտետի Միրզաբեկի Միրզաբեկի գյուղում:

Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության եւ գյուղատնտեսության նախարարության տեղեկատվության համաձայն՝ հյուրանոցը ներառում է 10 փայտե քրթեքներ, որոնց կազմակերպման համար ներդրումների գումարը կազմել է ավելի քան 225,000 լարի, այդ թվում՝ գյուղի զարգացման ծրագրի համաֆինանսավորումը՝ 170,000 լարի: Հյուրանոցում աշխատում է 13 տեղացի:

Ծրագրի աջակցությամբ Վրաստանում նորաբաց հյուրանոցը ուսումնասիրել են Եվրոպական միության ներկայացուցչության գյուղական զարգացման, քաղաքացիական անվտանգության եւ ճգնաժամային կառավարման ծրագրերի մենեջեր Բեթեան Խուցիշվիլին, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի մենեջեր Նոդար Կերեսելիձեն:

COVID - 19

ՉԳՈՆ ԵՂԵՔ, ԿՈՎԻԴԸ ԿԱՐԾԵՍ ԹԵ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է

12 729 ՎԱՐԱԿՄԱՆ ԵՎ 8 ՄԱՀՎԱՆ ԴԵՊԷ՝ ՄԵԿ ԸՆԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ



Անցած շաբաթվա ընթացքում Վրաստանում գրանցվել է կորոնավիրուսով վարակման 12 729 նոր դեպք: Առողջացել է 11 199 բուժառու, 8-ը մահացել են: Այս մասին տեղեկությունը տարածել է Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը:

Մեկ շաբաթվա ընթացքում Վրաստանում 67 հազար 482 թեստավորում է կատարվել: 7-օրյա թեստավորման դրական ցուցանիշը կազմում է 16,82 տոկոս:

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՐԵԼԻՉԵՆ ԹՈՂԵՑ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՇՄԱՐՄԱՆ ԱՉԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԴԵԿՎԱՐԻ ԴԱՇՏՈՆԸ

Վրաստանի հիվանդությունների վերահսկման կենտրոնի (NCDC) ղեկավար Ամիրան Գամդրեիձենն թողեց պաշտոնը:



- Ես ոչ ոքի հետ ընդհարում չեմ ունեցել եւ չունեմ, ես ազդեցիկ մարդ չեմ, ինձ ժամանակավոր կփոխարինի թամար Գաբունիան մինչև նախարարությունը նոր ղեկավար կընտրի,- պաշտոնը լքելու մասին լրագրողներին ասաց Հիվանդությունների վերահսկման կենտրոնի ղեկավար Ամիրան Գամդրեիձենը:

Նշենք, որ Ամիրան Գամդրեիձեն 2013 թվականից ղեկավարում է Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը:

Էջը պատրաստեց ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՐՄԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԶՈՐ Է ԴԱՐՁԵԼ 153 ԲՈՒԺԱՇՄԱՏՈՂ

Հուլիսի 1-ի դրությամբ, Վրաստանում, կորոնավիրուսից մահացել է 153 բուժաշխատող: Այս մասին ասված է Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի հրապարակած հաշվետվության մեջ: Ըստ հաշվետվության՝ բժշկական հաստատություններում աշխատող վարակված կանանց թվում մահացությունը կազմել է 0,4, իսկ տղամարդկանց շրջանում՝ 1,4 տոկոս: Բացի այդ, մահացության 53 դեպքերում (34,6 տոկոս) նկատվել են քրոնիկական հիվանդություններ: Մահացած աշխատողների մեծամասնության մոտ նկատվել են շնչառական հիվանդություններ:

ՊԱՏՎԱՍՏՄԱՆ 2 903 548 ԴԵՊԷՐԻՑ 2 055-ՈՒՄ ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ԲԱՐԴԱՑՈՒՄ

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի հաշվետվության համաձայն, ընթացիկ տարվա հուլիսի 1-ի դրությամբ, երկրի տարածքում անց է կացվել 2 903 548 պատվաստում, որից 2 055 դեպքում գրանցվել են բարդացումներ: Ըստ հաշվետվության՝ վավերացված 2 055 դեպքերից առավել լուրջ բարդացումներ է եղել 212 դեպքում, 181 հիվանդ դիմել է բուժօգնությանը:

Ինունհինգամյա անվտանգության փորձագետների ազգային կոմիտեի հաշվարկմամբ, վերոնշյալ 212 դեպքերից, 125-ը պայմանավորված է պատվաստման դեմ վախի, 53-ը՝ պատվաստանյութի նկատմամբ անվստահության զգացումով:

Նշենք, որ վերջին երեք ամիսների ընթացքում, երկրում կտրուկ նվազել է պատվաստումների թիվը:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ԶՈՐԵՐԻ 59 ՏՈՒԿՈՍԸ ՏԱՌԱՊՈՒՄ ԷՐ ՔՐՈՆԻԿԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի տվյալներով, ընթացիկ տարվա հուլիսի 1-ի դրությամբ, մահացածների 59 տոկոսի մոտ նկատվել են տարբեր տեսակի քրոնիկական հիվանդություններ: Հաշվետվության համաձայն, մահացածության բոլոր դեպքերում, հիվանդությունն ընթանում էր ծանր կամ շատ ծանր: Այդ դեպքերի 82 տոկոսի մոտ հայտնաբերվել է թոքաբորբ, 79-ը տառապում էր անբավարար շնչառությամբ: 21 տոկոսը տառապում էր սրտի անբավարարվածությունից:

ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄՈՎ ՎԵՐԱՎԱՐԱԿՄԱՆ 138 331 ԴԵՊԷ

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ներկայացրած հաշվետվության մեջ նշված է, որ 2020 թվականի փետրվարի 26-ից մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը վավերացվել է կորոնավիրուսով վերավարակման 138 331 դեպք: Նույն հաշվետվությունից ելնելով, 2021 թվականի մարտի 15-ից մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը, վերավարակման 16 862-ի դեպքում ծագել է հոսպիտալացման անհրաժեշտություն, 102-ը մահացել են: Մահացածների միջին տարիքը եղել է 69-ը, նվազագույնը՝ 18, իսկ առավելագույնը՝ 89:

ԴԻՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ԿՈՐԲԱՆԻՉԵ. «ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱՓՎԿՈՒՄՆԵՐ ՄՏՅՆԵԼ ԱՅԼԱՏՅԱՆՈՒԹՅՈՒՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պես խայտառակություն է եւ որը չի տեղավորվում ոչ մի շրջանակի, ոչ մի ստանդարտի մեջ: Եթե որեւէ մեկն ուզում է եվրոպացի լինել, ապա այլատյացությունն այս պարագայում անընդունելի է: Կորախիձենը՝ հավելելով, որ Վրաստանում այլատյացությունը տեղ չունի:

Ինչ վերաբերում է զբոսաշրջությանը, ապա Իրակլի Կորախիձենը նորից շեշտեց, որ զբոսաշրջությունը

նր տնտեսության հիմնական ուղղություններից մեկն է:

- Օրինակ, հեռուստաընկերություններից մեկը հայտարարեց, որ այսօր Վրաստանում ռուս զբոսաշրջիկների թիվը կազմում է Վրաստանի բնակչության 10 տոկոսը, ինչը բացարձակ սուտ է: Իրականում այդ թիվը նույնիսկ մեկ տոկոս չի կազմում: Ընդհանուր առմամբ, Վրաստան մուտք ու ելք գործած 242 հազար մարդ կա,- ասաց Իրակլի Կորախիձենը:

ԱՐԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ՎՐԱՍԱՆ Ե ԺԱՄԱՆԵԼ ՔԱՌՈՐԴ ՄԻԼԻՈՆ ԶԲՈՍԱՇՐՋԻԿ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի զբոսաշրջության ազգային գործակալությունը, ընթացիկ տարվա հունվար-հունիս ամիսներին, Վրաստան է ժամանել 247 149 ռուսաստանցի զբոսաշրջիկ, ինչը 64,3 տոկոսով գիջում է 2019 թվականի համապատասխան ժամանակամիջոցի ցուցանիշին: Նշենք, որ 2019-ի առաջին կիսամյակում, Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկների թիվը կազմում էր 691 587:

2020-2021 թվականներին կորոնավիրուսի համավարակով պայմանավորված սահմանափակումների պատճառով զբոսաշրջիկների հոսքը կտրուկ նվազեց: 2020 թվականին Ռուսաստանից Վրաստան է ժամանել 183 135 մարդ, իսկ 2021 թվականին այդ թիվը կազմել է 43 847:

Վրաստանի զբոսաշրջության ազգային գործակալության տվյալներով ընթացիկ տարվա ամսացած ժամանակահատվածում զբոսաշրջիկների թիվը կազմել է 2 344 329 մարդ, ինչը 21,4 տոկոսով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ՇՆՈՐՀԱՎՈՐ 96-ԱՄՅԱԿ, ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐՔԱ ԴՊՈՂՈՍ ԱԿՈՂՎ

Լրացավ արտակարգ եւ լիազոր դեսպան, Ռուսաստանի արտաքին քաղաքական միջազգային ասոցիացիայի նախագահ Դոլդոս Սիմոնի Ակոլովի 96-ամյակը:

Դոլդոս Ակոլովը ծնվել է Վրաստանում, Ախալցխի շրջանի Սխվիլիսի գյուղում, 1926 թվականի օգոստոսի 11-ին: Ուսումը սկսել է տեղի դպրոցում, 30-ական թվականներին փոխադրվել է Թբիլիսի, սովորել է հայկական թիվ 72, ապա՝ ռուսական թիվ 43 դպրոցներում: Միջնակարգն ավարտելուց հետո, սովորել է Թբիլիսիի երկաթուղային տեխնիկումում, որն ավարտելուց հետո, աշխատանքը սկսել է Ռուսաստանի Մոսկվայի պետական Մոսկվայի տնտեսական ինստիտուտը, մասնագիտությամբ աշխատել ԽՍՀՄ Պետսպլանում եւ Մատակարարումների պետական կոմիտեում:



Չիշատակի լուսանկար սխվիլիսցիների հետ

Չիշատակի լուսանկար սխվիլիսցիների հետ

տել է Քուվեյթում, Լիբիայում: Դիվանագիտական երկարամյա գործունեության համար Դոլդոս Ակոլովին կոչել են «Դիվանագիտության արքա»:

Երբ 1993 թվականին ԽՍՀՄ արտաքին գործերի նախկին նախարար Էդուարդ Շեւարդնաձեն գլխավորեց Արտաքին քաղաքական միջազգային ասոցիացիան, նրա երաշխավորությամբ Դոլդոս Ակոլովը նշանակվեց այդ ասոցիացիայի փոխնախագահ եւ մինչ օրս, արդեն նախագահի կարգավիճակով շարունակում է աշխատանքը Ռուսաստանի արտաքին քաղաքական միջազգային ասոցիացիայում: Հատկանշական է, որ նորանկախ Վրաստանի եւ Հայաստանի նախագահների խնդրանքով Դոլդոս Ակոլովը կարողացավ վերոնշյալ երկու երկրները դիվանագիտական կապերով առնչել Արաբական աշխարհի երկրների հետ:

...Իսկ ամենահաճելի թերեւս այն է, որ ամենուրեք ու առայսօր Դոլդոս Ակոլովի հետ շարունակում է մնալ 70 տարվա համատեղ կյանքի հավատարիմ ու սիրելի կինը՝ 92-ամյա տիկին Եմման: Դոլդոս Ակոլովը գրեթե ամեն տարի այցելում է իր ծննդավայր Սխվիլիսի: Վերջերս, մոտ մեկ ամիս առաջ, չնայած իր պատկառելի տարիքի, նա իր որ-

դու՝ Սերգեյի հետ գտնվում էր Սխվիլիսիում, համոզվում ունեցավ իր մանկության ընկերների, տեղի բնակիչների հետ: Նշենք, որ Դոլդոս Ակոլովի որդին՝ Սերգեյը, նույնպես դիվանագետ է եւ որպես Ռուսաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան այդ երկիրը ներկայացնում էր Բրազիլիայում, Կոստա-Ռիկայում, Չիլիում, Սուրինամում: Ներկայումս Սերգեյ Ակոլովը պատասխանատու պաշտոն է զբաղեցնում Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարությունում:

Հավատարիմ ընտանեկան ավանդույթի, Դոլդոս Ակոլովի ծոռը, 22-ամյա Պյոտրը, նախապապի օրինակով ներկայումս սովորում է Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտի մագիստրատուրայում արաբագիտության մասնագիտությամբ:

«Վրաստան» թերթի խմբագրությունը, Ախալցխի մունիցիպալիտետի Սխվիլիսի բնակիչների հետ միասին իր շնորհավորանքներն է հղում Դոլդոս Ակոլովին՝ ծննդյան 96-ամյակի առիթով, մաղթում քաջառողջություն, կորով՝ ստանձնած հասարակական-քաղաքական գործունեությունն արդյունավետ շարունակելու համար:

ՏԱՐԱԾՆԵՐԱՆ

ԼԵՐԻ ԲԱՐՆԱԲԻՇՎԻԼԻՆ ՀԱՆԴԻՂԵՑ ՍԱՄՅԻՆԵ-ԶԱՎԱՍԵՐԹԻ ՍՈՒՆԻՅԻՊԱԼԻՏԵՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԵՎ ՍԱԿՐԵԲՈՒՈՅԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԵՏ

Օգոստոսի 7-ին, Վրաստանի կառավարության վարչակազմի տարածաշրջանների հետ հարաբերությունների դեպարտամենտի պետ Լերի Բարնաբիշվիլին եւ Սամցխե-Ջավախեթի երկրամասում պետական լիազոր-նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին հանդիպեցին տարածաշրջանի մունիցիպալիտետների քաղաքապետների եւ սակրեբուլոյի նախագահների հետ:

Հանդիպմանը կենտրոնական եւ տեղական իշխանության ներկայացուցիչները խոսեցին տարածաշրջանի ընթացիկ եւ ծրագրված նախագծերի, այդ թվում՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Գաբրիաշվիլու նախաձեռնությամբ մեկնարկած «Նորացված տարածաշրջաններ» նախագծի մասին: Հանդիպմանը Լերի Բարնաբիշվիլին քաղաքապետներից եւ սակրեբուլոյի նախագահներից մանրամասն տեղեկատվություն ստացավ մունիցիպալիտետների քաղաքներում եւ գյուղերում առկա հիմնախնդիրների մասին: Ինչպես հայտարարեց Լերի Բարնաբիշվիլին, տարածաշրջանների զարգացումը կենտրոնական իշխանության առաջնահերթությունն է:



- Հանդիպմանը խոսեցինք տարածաշրջանում ընթացիկ ենթակառուցային նախագծերի մասին: Անդրադարձանք վարչապետի նախաձեռնությամբ իրականացվող «Նորացված տարածաշրջաններ» նախագծին, որը ներառում է Սամցխե-Ջավախեթի բոլոր վեց մունիցիպալի-

տետների կենտրոնական փողոցներն ու կանաչապատ տարածքները: Մունիցիպալիտետների ղեկավարները հանդես եկան նախաձեռնությամբ, ըստ որի՝ իրականացվող նախագծերին զուգընթաց, մունիցիպալային միջոցներով կիրականացվի քաղաքների եւ գյուղերի բարեկարգումը: Քննարկեցինք նաեւ տեղի բնակչությանը հուզող հարցերը, պայմանավորվեցինք դրանց կարգավորման հարցում օգնություն ցուցաբերել կենտրոնական իշխանության եւ համապատասխան գերատեսչությունների միջոցով,- հայտարարեց Լերի Բարնաբիշվիլին եւ հավելեց, որ այս տարի Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում ընթացքի մեջ է 479 նախագիծ: Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ՀԻՄՆԱՆՈՐՈՎՈՒՄ Ե ԽԱՆՈՒՐԻ-ՍԽԱՆՅԻՏԵ-ՎԱԼԵ ՀԱՆԱՊԱՐԻՉԻ 7 ԿԻՆՍԵՏՐԱՆՈՅ ՀԱՏՎԱԾԸ

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարարության, ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտը, միջազգային նշանակություն ունեցող Խաշուրի-Ախալցխի-Վալե ավտոմոբիլային ճանապարհին իրականացնում է վերականգնողական աշխատանքներ:

Գերատեսչության տեղեկատվությամբ վերականգնվող հատվածը գտնվում է Բորժոմի մունիցիպալիտետում: Առաջին հատվածը սկսվում է Ախալդարա գյուղի տարածքից եւ ավարտվում Կորտանեթի գյուղի մոտ, իսկ երկրորդ հատվածը սկսվում է Ռվելի գյուղի մոտ եւ շարունակվում մինչեւ Բորժոմի Դավիթ Աղմաշենեթի փողոց թիվ 40:



Վերականգնման նախագիծը նախատեսում է ճանապարհի ասֆալտբետոնե ծածկի կազմակերպում, մեկ կամրջի, արհեստական կառույցների վերականգնում եւ նորերի կազմակերպում, փակ ջրահեռացման ցանցի կազմակերպում, առկա բետոնե հեռացարների նորոգում եւ ստորին հատվածի կազմակերպում: Խաշուրի-Ախալցխի-Վալե ավտոճանապարհը տարանցիկ միջանցքի հիմ-

նական բաղադրիչներից է եւ միացնում է Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանը Վրաստանի այլ վարչական միավորների հետ: Այդպիսով, իրականացվում է տարանցիկ բեռնաշրջանառություն եւ սոցիալ-տնտեսական տեսակետից մեծ նշանակություն ունի դրա պատշաճ գործունեությունը: Ծրագիրը ֆինանսավորվում է պետությունից, որի արժեքը կազմում է 9,7 մլն լարի: Աշխատանքների ավարտը նախատեսվում է 2023 թվականի գարնանը, ասվում է ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտի տեղեկատվության մեջ: